# ԱԳՐՈ Լրատու

ՄԱՐՏ 7 - 15 2017 Թ. ԹԻՎ 5 (2126)

ՏԱՍՆՕՐՅԱ ԹԵՐԹ ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է 1951 Թ. ԳԻՆԸ՝ 120 ԴՐԱՄ


**ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅՑ**



## *ՀՀ գյուղատնտեսության նախարարն այցելել է Արարատի մարզ*

**ՀՀ գյուղատնտեսության նախարար Իգնատի Առաքելյանն այցելել է Արարատի մարզ՝ մասնակցելու գյուղատնտեսական աշխատանքների մեկնարկին նվիրված մարզխորհրդի նիստին: Միջոցառմանը ներկա էին մարզպետ Արամայիս Գրիգորյանը, ոլորտի պատասխանատուներ, համայնքապետեր, գյուղացիներ:**

Արարատի մազպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Հայկազ Տերտերյանը նիստի սկզբում զեկուցել է գարնան գյուղատնտեսական նախապատրաստական աշխատանքների իրականացման ընթացքը՝ շեշտադրելով ոռոգման համակարգի վերականգնման, ինչպես նաև եղանակային կտրուկ տաքացման դեպքում, գարնանային հնարավոր հեղեղումների և սելավների դեմ իրականացվելիք միջոցառումների խնդիրները: Վարչության պետն անդրադարձել է մթերումների դիմաց, ինչպես նաև պետական աջակցության ծրագրերով պարարտանյութերի և սերմացուների պարտքերի վերադարձին:

Անդրադառնալով մթերումների գործընթացի կարգավորմանը՝ նախարարը տեղեկացրել է, որ մշակվում է ծրագիր, որով նախատեսվում է մթերողներին էժան, սուբսիդավորվող տոկոսադրույքով վարկային միջոցներ տրամադրել. ծրագրից օգտվելու համար գործելու է նախապայման՝ գյուղացուց մթերված բերքի արժեքը պետք է վճարվի եռօրյա ժամկետում: «Այժմ մենք ծրագրի ֆինանսավորման ուղղությամբ ենք աշխատում: Եթե կարողանանք այն գործողության մեջ դնել, ապա մոտ երկու տարի հետո ընդհանրապես մթերումների հարցում խնդիրներ չենք ունենա: Քանի որ սկզբնապես ֆինանսական միջոցները սահմանափակ են լինելու, սուբսիդավորումը կարվի թիրախային՝ խաղող, լոլիկ, կաթ, քանի որ դրանց վճարումների հարցում սովորաբար շատ պարտքեր են կուտակվում, հետագայում ոլորտները կընդլայնվեն»,- նշել է նախարար Իգնատի Առաքելյանը:

Նախարարը նշել է, որ այժմ նաև հանդիպումներ է ունենում խաղողի խոշոր մթերողների հետ, որպեսզի մթերումներն իրականացվեն պայմանագրերով, որոնցում հստակ կարձանագրվեն վճարումների ժամկետները, ինչպես նաև աշխատանքներ են տարվում խաղողի մթերման շուկայական նվազագույն գին սահմանելու ուղղությամբ, որը տարբերակված կլինի ըստ խաղողի տեսակների՝ հաշվի առնելով դրանց պահանջարկն ու բերքատվությունը:

Այս համատեքստում նախարարը նոր տեղեկություններ է ներկայացրել նաև «Վինար» ընկերության գործի վերաբերյալ: Նախարարի խոսքով՝ կա գնորդ, որը պատրաստ է գնել ընկերության սպիրտը, որը բռնագանձվել և կապարակնքվել էր՝ մթերման պարտքերը մարելու նպատակով: Սակայն լաբորատոր անալիզներով պարզվել է, որ այդ սպիրտը խաղողի չէ: Այժմ «Վինարը» երկրորդ նմուշն է տրամադրել, որն ուղարկվել է լաբորատոր հետազոտության: Իր հերթին մարզպետ Արամայիս Գրիգորյանը հավելել է, որ հանդիպել է «Վինարի» ներկայացուցչի և գյուղացիների հետ:

↳ 2

**ՔՆՆԱՐԿՈՒՄ**

## *Համագործակցություն գյուղոլորտում*

**ՀՀ գյուղատնտեսության նախարար Իգնատի Առաքելյանն ընդունել է Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի (ՎԶԵԲ) ագրոբիզնեսի հարցերով տարածաշրջանային տնօրեն Նադյա Պետկովայի գլխավորած պատվիրակությանը: Հանդիպման նպատակն էր՝ քննարկել գյուղատնտեսության ոլորտում հետագա համագործակցության ուղղությունները և նախանշել համատեղ ծրագրերի իրականացման հնարավորությունները:**

Ողջունելով հյուրերին՝ նախարար Իգնատի Առաքելյանը նշել է, որ ներկայումս մշակման փուլում են Հայաստանի գյուղատնտեսության ոլորտում առաջիկայում նախատեսվող ծրագրերը:

Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկը պատրաստակամություն է հայտնել վարկային ռեսուրսներ տրամադրել Հայաստանի գյուղատնտեսության ոլորտում խոշոր տնտեսավարողներին: Նադյա Պետկովան նշել է, որ այս հարցում ակնկալում են ՀՀ գյուղատնտեսության նախարարության աջակցությունը:

**ՊԱՇՏՈՆԱԿԱՆ**

**Գյուղատնտեսության ոլորտում առկա տարբեր ֆինանսավորման աղբյուրներ ունեցող ծրագրերի մեկ միասնական մարմնի կողմից իրականացման, գյուղացիական տնտեսություններին մատուցվող ծառայությունների որակի բարձրացման և շրջանակի ընդլայնման, ոլորտում դոնորների կողմից իրականացվող ծրագրերի համակարգման, արդյունավետ գյուղատնտեսության զարգացման, ռեսուրսների օպտիմալ բաշխման անհրաժեշտությամբ պայմանավորված՝ կառավարությունն ընդունել է համապատասխան որոշում:** Ըստ այդմ՝ կդադարեցվի ՀՀ գյուղատնտեսության նախարարության Գյուղատնտեսական ծրագրերի իրականացման գրասենյակի գործունեությունը և կստեղծվի Գյուղատնտեսական զարգացման հիմնադրամ: Որոշման նպատակն է՝ հիմնադրամի միջոցով նպաստել հանրապետությունում գյուղատնտեսության կայուն, մրցունակ և ժամանակակից զարգացմանը:

**Կառավարությունը հավանություն է տվել պարտադիր սպանդանոցային մորթի կիրառման ոլորտներին և ժամանակացույցին:** ՀՀ կառավարության ծրագրով սահմանվել է 2017 թ.-ից սկսած՝ մսի իրացման և գնման գործընթացում պարտադիր սպանդանոցային մորթի փուլային անցում՝ մինչև 2021 թ. ամբողջովին սպանդանոցային մորթի անցնելու նպատակով: Ըստ կարևորության՝ սահմանվել են կիրառման հետևյալ ոլորտները՝ պետական գնումներով սպանդանոցային ծագման մսի ձեռքբերում (2017թ. մայիսի 1-ից), մսամթերքի արտադրություն՝ տեղական սպանդանոցային ծագման միս օգտագործելու դեպքում (2017 թ. նոյեմբերի 1-ից), տեղական արտադրության սպանդանոցային ծագման մսի արտահանում (2017 թ. նոյեմբերի 1-ից), Երևան քաղաքի հանրային սննդի կազմակերպման օբյեկտներում՝ տեղական սպանդանոցային ծագման միս օգտագործելու դեպքում (2018 թ. ապրիլի 1-ից) և այլն: Կարեն Կարապետյանը հորդորել է առավելագույնս հետևողական լինել այդ գործընթացի իրականացման հարցում, որպեսզի բիզնեսի համար խոչընդոտներ չստեղծվեն:

**2017 թ. գյուղատնտեսական աշխատանքների իրականացման ընթացքում, հանրապետության հողօգտագործողներին աջակցելու՝ մատչելի գներով ազոտական, ֆոսֆորական և կալիումական պարարտանյութերի ձեռքբերման համար կառավարությունն ընդունել է համապատասխան որոշում:** ՀՀ մարզպետարաններից ստացված տեղեկատվության համաձայն՝ 2017 թ. գյուղատնտեսական աշխատանքների համար անհրաժեշտ է 34882 տոննա ազոտական, 983.5 տոննա ֆոսֆորական և 903.05 տոննա կալիումական պարարտանյութեր: Նշենք, որ եթե նախորդ տարի ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը տրամադրել է 4 մլրդ ՀՀ դրամի բյուջետային վարկ՝ պարարտանյութ ներկրելու և մոտ 2 մլրդ 110 մլն դրամ սուբսիդավորման համար, ապա ընթացիկ տարում պարարտանյութերի տրամադրման ծրագրի սուբսիդավորմանը կուղղվի ընդամենը 900 մլն ՀՀ դրամ, ինչի արդյունքում կտնտեսվի մոտ 1 մլրդ 200 մլն ՀՀ դրամ:

**Գործադիրը համապատասխան որոշմամբ հաստատել է ՀՀ-ում 2017թ. գարնանացան ցորենի, հնդկացորենի, ոլոռի, սիսեռի, գարնանացան գարու, եգիպտացորենի, առվույտի և կորնգանի արտադրության զարգացման ծրագիրը:** Անհրաժեշտ սերմացուները, ծրագրի դրույթներին համապատասխան, սուբսիդավորված գներով կտրամադրվեն գյուղացիական տնտեսություններին: ՀՀ գյուղատնտեսության նախարար Իգնատի Առաքելյանը տեղեկացրել է, որ ծրագրի շրջանակում կապահովվի շուրջ 10 հազար հա գարնանացան և գումարը կհատկացվի «Սերմերի գործակալություն» ՊՈԱԿ-ի նպատակային հաշիվներից: Վարչապետը նշել է, որ մարզային այցերի ժամանակ հարց է բարձրացվում այդ սերմերի անարդյունավետության վերաբերյալ, ինչի պատճառով գյուղացիները սուբսիդիաների վերադարձման խնդիր են ունենում: Գործադիրի ղեկավարը ՀՀ գյուղատնտեսության նախարարից հետաքրքրվել է, թե արդյոք կնքվելիք պայմանագրերում ամրագրվել է կողմերի պատասխանատվությունը: Նախարարը պատասխանել է. «Այո, մենք ամրագրել ենք: Սերմերը ստուգվելու են համապատասխան լաբորատորիաներում, իսկ արդյունքները հրապարակվելու են»: Կարեն Կարապետյանը հանձնարարել է այդ հարցը պահել ուշադրության կենտրոնում՝ տարաբնույթ մեկնաբանություններից խուսափելու համար:


*Արտադրություն* — *էջ 3*

*Կոոպերացիա* — *էջ 4*

*Մասնագետի խորհուրդը* — *էջ 7*

## ԱՆԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅՑ

### ՀՀ գյուղատնտեսության նախարարն այցելել է Արարատի մարզ

↳ 1

Գյուղացիների մի մասը ցանկություն է հայտնել պարտքերի դիմաց սպիրտ վերցնել, մյուսները նախընտրել են սպասել սպիրտի գնման գործարքի ավարտին: Գյուղացիների այն մտահոգությանը, որ ընկերությունը գնում է սնանկացման, մարզպետը պարզաբանել է, որ սպիրտը կապարակնքված է և պետության ենթակայության տակ է գտնվում, ուստի սնանկացման գործընթացը պարտքերի վճարումների վրա ազդեցություն ունենալ չի կարող: Այնուհետև նախարարը համառոտ ներկայացրել է գյուղատնտեսության ոլորտում իրականացվելիք ծրագրերը:

Անդրադառնալով պետության կողմից պարարտանյութի սուբսիդավորման ծրագրին՝ նախարարը նշել է, որ նախատեսվում է հաջորդ տարվանից դադարեցնել սուբսիդավորման գործընթացը և ազատականացնել շուկան: Նախարարը նաև տեղեկացրել է, որ գյուղոլորտում ապահովագրական համակարգ ներդնելու նպատակով, այս տարի կիրականացվի փորձնական ծրագիր: Միաժամանակ նախարարը վստահություն է հայտնել, որ ապահովագրական համակարգի ներդրումը բարենպաստ պայմաններ կստեղծի լրացուցիչ ներդրումների իրականացման և ոլորտի զարգացման համար: Իգնատի Առաքելյանը տեղեկացրել է, որ մշակվում է նաև կաթիլային համակարգի ներդրման ծրագիր, ինչպես նաև նախատեսվում է տեղադրել հողատարածքների արբանյակային մոնիթորինգի տեղեկատվական համակարգ, ինչը թույլ կտա ունենալ անմշակ և մշակովի հողատեսքերի վերաբերյալ հստակ տեղեկատվություն և մշակել ծրագրեր, որոնց շնորհիվ կավելացվեն մշակովի հողատարածքները:

Խորհրդակցության ընթացքում մասնակիցները ներկայացրել են իրենց հուզող հարցերը, որոնք, մասնավորապես, վերաբերում էին սերմնաբուծության ոլորտում տեղական ցորենի բերքատվության բարձրացմանը, մարզում ոռոգման ջրի մատակարարման համակարգերի բարելավմանը, հակակարկտային կայանների կիրառման արդյունավետության ապահովմանը: Բարձրացվել է նաև մարզում գյուղատնտեսական տոնավաճառի կազմակերպման անհրաժեշտության հարցը, ինչը հնարավորություն կտա մարզի գյուղատնտեսներին իրացնելու իրենց բերքը: Ի պատասխան՝ նախարար Իգնատի Առաքելյանը նշել է, որ համապատասխան շենքային պայմանների առկայության դեպքում, գյուղատնտեսության նախարարությունը կարող է քննարկել այդ առաջարկը միջազգային կազմակերպությունների հետ:

## ՔՆՆԱՐԿՈՒՄ

### Գյուղոլորտին առնչվող ներդրումային ծրագրեր

**ՀՀ գյուղատնտեսության նախարարությունում հրավիրվել էր խորհրդակցություն՝ ՀՀ Արմավիրի մարզից ստացված գյուղատնտեսության ոլորտին առնչվող ներդրումային ծրագրերը քննարկելու նպատակով: Խորհրդակցությունը վարում էր նախարարի տեղակալ Ռոբերտ Մակարյանը, մասնակցում էին ՀՀ կառավարության աշխատակազմի, «ՓՄՁ ներդրումներ» ՈՒՎԿ-ի, «Գյուղական ֆինանսական կառույց-ԾԻԳ» պետական հիմնարկի, Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոնի, Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի ներկայացուցիչներ, ծրագրերի շահառուներ և այլ պատասխանատուներ:**

Ընդհանուր առմամբ, Արմավիրի մարզից ներկայացվել է գյուղատնտեսությանն առնչվող թվով 15 ներդրումային ծրագիր, որոնց շրջանակում, մասնավորապես, նախատեսվում է հիմնել խտանյութերի և պահածոների արտադրության համալիր գործարան, ոռոգման կաթիլային եղանակով մշակել բոստանային մշակաբույսեր, վերագործարկել պտղասառնարան, կառուցել պարարտանյութերի և կաթիլային խողովակների արտադրության գործարաններ, հիմնել ելակի ջերմատուն, կազմակերպել մատուտակի արմատների արտադրություն, ժամանակակից տեխնոլոգիաներով հագեցած ջերմատներում աճեցնել օրգանիկ գյուղմթերք, կազմակերպել վարդաբույր խորդենու եթերային յուղի արտադրություն, ընդլայնել «Ոսկենի» գինու արտադրությունը, ինչպես նաև ունիվերսալ ֆերմայում ցլիկների բտման կազմակերպում և բարձրորակ օրգանական մսի արտադրություն:

Պատասխանատուները, շահառուների հետ համատեղ, քննարկել են ներկայացված ծրագրերի ֆինանսական գնահատականները, նպատակահարմարությունն ու հիմնավորումները, ինչպես նաև ֆինանսավորման ուղղություններն ու աջակցության տարբերակները:

## ՊԱՇՏՈՆԱԿԱՆ

**Վարչապետ Կարեն Կարապետյանը օրերս աշխատանքային այց է կատարել Վայոց ձորի մարզ՝ պատասխանատուների հետ քննարկել համայնքների, տնտեսության տարբեր ճյուղերի, այդ թվում՝ զբոսաշրջության զարգացմանը վերաբերող հարցեր, եղել արտադրական ձեռնարկություններում:**



Կառավարության ղեկավարը նախ հանդիպել է Ջերմուկի առողջարանների և հյուրանոցների ղեկավարների հետ, որի ընթացքում մանրամասն անդրադարձ է կատարվել Ջերմուկում տուրիզմի խթանմանը, այդ ուղղությամբ անհրաժեշտ քայլերի իրականացմանը: Բացի առողջարանների և հյուրանոցների գործունեության ակտիվացումից բացի, կարևորվել է ենթակառուցվածքների զարգացումը, սննդի, ժամանցի, ծառայությունների մատուցման օբյեկտների ավելացումը, զբոսաշրջիկի համար հետաքրքիր փաթեթների մշակումը: Կարեն Կարապետյանը նշել է, որ Ջերմուկը չի կարող գրավիչ լինել, եթե անհրաժեշտ ենթակառուցվածքները բացակայում են: «Մենք ամեն ինչ անելու ենք, որպեսզի ներդրողները գան Ջերմուկ, շահագրգռված ենք, որպեսզի բիզնեսն ակտիվանա: Ջերմուկի քաղաքապետից ակնկալում ենք զբոսաշրջության զարգացման կոնկրետ, համալիր ծրագիր՝ պետություն-մասնավոր համագործակցությամբ, ինչը կնպաստի նաև զբոսաշրջային սեզոնի երկարաձգմանը»,- ասել է Կ. Կարապետյանը:

Այնուհետև վարչապետն այցելել է հանքային և բնական ջրերի արտադրությամբ զբաղվող «Ջերմուկ գրուպ» ընկերություն, շրջել գործարանում, ծանոթացել իրականացված ներդրումներին, գործարանի արտադրական հզորություններին և զարգացման ծրագրերին: Գործարանում կատարվել է մոտ 5 մլրդ դրամի ներդրում, որից միայն 3,4 մլրդ դրամն ուղղվել է ժամանակակից սարքավորումների ձեռքբերմանը: «Ջերմուկ գրուպ»-ը ներկայումս ունի 370 աշխատակից: Պատասխանատուների հավաստմամբ, նոր ներդրումների արդյունքում՝ աշխատատեղերի քանակը կավելանա 15 տոկոսով:

Կարեն Կարապետյանն այցելել է Եղեգնաձորի պահածոների գործարան, որը սկսել է գործել 2015 թվականի հունիսից: Կառավարության ղեկավարին տեղեկացվել է, որ գործարանն արտադրում է տարբեր տեսակի մթերքներից պատրաստված պահածոներ: Արտադրանքն իրացվում է ինչպես հանրապետությունում, այնպես էլ արտերկրում: Գործարանում ստեղծվել է 240 աշխատատեղ: Ընթացիկ տարում նախատեսում են ավելացնել մթերման և արտահանման ծավալները: Վարչապետը կարևորել է գյուղմթերքի վերամշակմամբ զբաղվող գործարանի գործունեությունը, ինչը նպաստում է տարածաշրջանի գյուղոլորտի զարգացմանն ու խթանմանը:

Կառավարության ղեկավարը եղել է նաև Եղեգնաձորի «Գոլդեն Գոուդ» պանրի գործարանում, որտեղ վարչապետը ծանոթացել է գործարանի արտադրական հզորություններին և առաջիկա ծրագրերին: Տեղեկացվել է, որ 2009 թվականից հիմնված գործարանում իրականացվել է շուրջ 200 մլն դրամի ներդրում: Այստեղ արտադրվում է այծի պանրի լայն տեսականի, նախորդ տարի արտադրական ծավալները հասել են 110-120 տոննայի, ինչը՝ գործարանի հիմնադրման տարվա համեմատ 15 անգամ ավելի է: Նախատեսվում է՝ նոր ներդրումների արդյունքում արտադրանքն ու տեսականին ավելացնել: Արտադրանքի 90 տոկոսն արտահանվում է ՌԴ, իսկ մնացած մասն իրացվում է հայաստանյան շուկայում: Աշխատանքներ են տարվում արտադրանքն Իրան և Ուկրաինա արտահանելու ուղղությամբ: Գործարանն ունի նաև անասնապահական ֆերմա. այծի կաթի 30 տոկոսն ապահովվում է դրա հաշվին, իսկ 70 տոկոսը մթերվում է մարզում գործող մյուս ֆերմաներից: «Գոլդեն Գոուդ»-ի զարգացմանն ուղղված ներդրումային ծրագիրը ներկայացվել է կառավարություն և այն քննարկվում է ՓՄՁ զարգացման ազգային կենտրոնում:

Վարչապետն այցելել է նաև Նորավանքի վանական համալիր, այնուհետև հանդիպել Վայոց ձորի համայնքների ղեկավարների հետ, քննարկել համայնքների զարգացմանը վերաբերող հարցեր: Կարեն Կարապետյանի խոսքով՝ գործադիրը ներդնում է ռեգիոնալ կառավարման նոր մշակույթ: «Բոլոր մարզերը և համայնքները պետք է՝ ըստ մեթոդաբանության ներկայացնեն զարգացման հնգամյա ծրագիր, ինչը չափազանց կարևոր փաստաթուղթ է և որին արձագանքելու ենք: Կառավարության և համայնքների ջանքերը համատեղելով՝ պետք է ապահովենք տնտեսության և համաչափ տարածքային զարգացում»,- ասել է Կարեն Կարապետյանը՝ ավելացնելով, որ եթե համայնքապետերը ցանկանում են լինել հաջողակ և կառավարության հետ համագործակցությունը լինի արդյունավետ, ապա պետք է գործեն ըստ մեթոդաբանության և հստակ ծրագրի:

## ԾՐԱԳԻՐ

### Կբարելավվի աշխատանքների որակը

**Աշխարհի բոլոր պետությունների համար կենդանիների վարակիչ, այդ թվում կենդանիների և մարդու համար ընդհանուր (զոոանտրոպոնոզ) հիվանդությունների դեմ պայքարի կազմակերպումը և արդյունավետ իրականացումը համընդհանուր խնդիր է:** Ելնելով հարևան երկրներում տիրող կենդանիների վարակիչ հիվանդությունների ներթափանցման բարձր ռիսկայնությունից և հանրապետության առանձին մարզերի կենդանիների վարակիչ հիվանդությունների համաճարակային իրավիճակից՝ հանրապետությունում անասնահամաճարակային կայուն իրավիճակ ստեղծելու և պահպանելու նպատակով, յուրաքանչյուր տարի ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից «Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում» ծրագրի շրջանակներում, մի շարք հիվանդությունների նկատմամբ իրականացվում են անասնահակահամաճարակային կանխարգելիչ և ախտորոշիչ միջոցառումներ, իսկ ծառայությունների մատուցումը պատվիրակվում է «Անասնաբուժասանիտարիայի և բուսասանիտարիայի ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ին:

Գյուղատնտեսական կենդանիների պատվաստման աշխատանքների որակի բարձրացման, մատուցվող ծառայությունների բարելավման նպատակով, այս տարի «Անասնաբուժասանիտարիայի և բուսասանիտարիայի ծառայությունների կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը և «Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոն» հիմնադրամը համատեղ կիրականացնեն ծրագրի շրջանակներում նախատեսված միջոցառումների կազմակերպումը: Համագործակցության արդյունքում կկատարելագործվեն մեխանիզմներ, որոնք ուղեցույց կհանդիսանան անասնաբուժական գործունեություն իրականացնող անձանց, մասնավորապես՝ Հայաստանի Հանրապետության պետական միջոցների հաշվին իրականացվող անասնաբուժասանիտարական միջոցառումներ իրականացնողների համար: Կկատարելագործվեն նաև գործուն մեխանիզմներ անասնաբուժության ոլորտում մատուցվող ծառայությունների, մասնավորապես գյուղատնտեսական կենդանիների պատվաստումների գործընթացը տեղում կազմակերպելու և տեղական մասնագետներին ներգրավելու գործընթացը կազմակերպելու ուղղությամբ: Կմշակվի բրուցելոզի և այլ սուր վարակիչ հիվանդությունների հայտնաբերման և կանխարգելման նոր տեխնոլոգիաների ու մեխանիզմների փաթեթ՝ հետագայում ՀՀ-ում ներդնելու նպատակով: Կկազմվի աշխատանքների մշտադիտարկման (մոնիթորինգի) ժամանակացույց՝ դրանց իրականացման ժամկետներին և որակին հետևելու նպատակով: Կմշակվի անասնապահությամբ զբաղվող տնտեսությունների հաշվառման և գրանցման արդյունավետ ու մատչելի համակարգ, որը հետագայում կապահովի ՀՀ տարածքում տնտեսությունների և անասնագլխաքանակի վերաբերյալ տեղեկատվական բազայի ստեղծումը՝ հստակ տվյալների առկայությամբ:

*Ծառայությունների ոչ պատշաճ իրականացման դեպքում, կարող եք դիմել ՀՀ ԳՆ՝ զանգահարելով (+37455) 541 968 հեռախոսահամարով:*

ԱԳՐՈ Լրատու
Մարտ 7 - 15, 2017 թ.
Թիվ 5 (2126)

## ՄՐՑԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹՅՈՒՆ

# ՊԱՐԶ ԴԱՐՁԱՆ «ԳՅՈՒՂՄԹԵՐՔԻ ՀԵՐՈՍ ԿԻՆ 2017» ՀԱՂԹՈՂՆԵՐԸ

***«Այս մրցանակաբաշխությունը ևս մեկ առիթ է գնահատելու և արժևորելու հայ կնոջ՝ առավել ևս գյուղատնտեսությամբ զբաղվող կնոջ դերը մեր կյանքում», «Գյուղմթերքի կին - հերոս 2017» ամենամյա մրցանակաբաշխության ժամանակ իր խոսքում նշել է ՀՀ գյուղատնտեսության փոխնախարար Ռոբերտ Մակարյանը: Մրցանակաբաշխությունը իրականացվում է 2011 թ-ից՝ Հայաստանի գյուղատնտեսության նախարարության և ՕՔՍՖԱՄ-ի հայաստանյան գրասենյակի կողմից:***




Փոխնախարարի խոսքով՝ մեր հանրապետությունում գյուղատնտեսության մեջ ներգրավվածների ավելի քան կեսից ավելին կանայք են: Դա շատ կարևոր նշանակություն ունի նաև կոոպերատիվ շարժման տեսանկյունից, որովհետև որոշումների կայացման տեսանկյունից, կանայք ավելի կազմակերպված են և պատասխանատու. «Բոլոր ոլորտներում՝ գյուղատնտեսության, անանասնաբուժության, վերամշակման մեջ, մեծ տեղ ունեն կանայք: Եթե մեր երկրում գյուղատնտեսական արտադրանքը մաքուր է, դրանում ոչ միայն նշանակություն ունի Հայաստանի ջուրը, հողը, այլ նաև՝ հայ կինը, որովհետև նրա տքնաջան աշխատանքի շնորհիվ է, որ մեր գյուղմթերքը դառնում է ավելի համեղ, ավելի որակով»,- կարևորել է Ռ. Մակարյանը:

Գյուղատնտեսության փոխնախարարը շնորհավորել է գյուղատնտեսությամբ զբաղվող կանանց և մաղթել, որ ունենան ավելի մեծ եկամուտներ, բավարարվածություն իրենց աշխատանքից և հեռու լինեն կարկտահարությունից և ցրտահարությունից, իսկ վերջում, երբ ամփոփեն տարին, տեսնեն իրենց քրտնաջան աշխատանքի արդյունքը:

Ողջույնի խոսքով հանդես է եկել նաև ՕՔՍՖԱՄ-ի հայաստանյան գրասենյակի տնօրեն Մարգարիտա Հակոբյանը: «Այս միջոցառումը շատ գեղեցիկ ավանդույթ է դարձել: Մեր կարգախոսն է՝ տնտեսական իրավազորումից մինչև քաղաքական մասնակցություն և բավականին մեծ աշխատանք է տարվում, որպեսզի մենք կարողանանք հզորացնել մեր կանանց, իրավազորել տնտեսապես, որպեսզի իրենք վստահ լինեն իրենց ուժերի վրա»: Նա իր խոսքում նշել է, որ այս միջոցառումը ոչ միայն նպաստում է ինքնագնահատականի բարձրացմանը, այլ նրա, որ կանայք պայքարեն հավասար իրավունքների և հավասարության համար: Տիկին Հակոբյանը կոչ է արել կանանց՝ լինել ավելի ակտիվ և նախաձեռնող ոչ միայն տնտեսական, այլև քաղաքական ոլորտում: «World Vision Armenia» կազմակերպության ներկայացուցիչ Իրենա Բալայանը, որը Սյունիքի մարզի տնտեսական ծրագրերի համակարգողն է, մրցանակաբաշխությանը եկել էր Սիսիանի տարածաշրջանի Աշոտավան գյուղից «օրգանիկ ազնվամորու» բիզնեսով զբաղվող կանանց 9 հոգանոց խմբով: Aravot.am-ի հետ զրույցում նա ասել է, որ այս ծրագիրն արդյունավետ է այնքանով, որ մոտիվացնում է կանանց. «Մենք այստեղ բերել ենք նաև ազնվամորու մուրաբա: Սա կնպաստի աշխատանքի ճանաչմանը, գնորդների ավելացմանը, ինչու չէ նաև միջազգային կազմակերպությունների կողմից իրազեկման բարձրացմանը»: Մրցանակաբաշխության ընթացքում գյուղատնտեսության ոլորտում հաջողության հասած կանայք ներկայացրել են իրենց ապրանքը և կիսվել իրենց հաջողության պատմություններով: Այս տարի «Գյուղմթերքի հերոս կին» կոչմանն արժանացան Հանիսյան Սուսաննան, Ներսիսյան Լարիսան, Աբովյան Ժենիկը, Վիկտորյա Ասրանյանը, Իրենա Բալայանը և այլք:

***Ռ. Հակոբյան***
***www.aravot.am***

## ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ

# «ԼՅՈՒՏԻԿ» ԱՊՐԱՆՔԱՆԻՇՈՎ ՊԱՀԱԾՈՅԱՑՎԱԾ ՄԻՐԳ – ԲԱՆՋԱՐԵՂԵՆԻ ՆԵՐՄՈՒԾՈՒՄ

**Հայկական շուկայում իրենց ուրույն տեղը գտած «Լյուտիկ» ապրանքանիշով պահածոների տարբեր տեսականիներ, իրենց համային և որակական բարձր հատկանիշների շնորհիվ մեծ պահանջարկ ունեն և՛ Հայաստանում և՛ Արցախում: Հայ գործարար՝ «Մինի Բասկոնիա» ՍՊԸ-ի հիմնադիր նախագահ և տնօրեն Եղիազար Գաբուզյանը, «Լյուտիկ» ապրանքանիշով պահածոների տեսականիներ է ներմուծում մեր հանրապետություն՝ Իսպանիայից, Հնդկաստանից, Չինաստանից, Թաիլանդից, Սիրիայից, ԵՏՄ-ի կազմի մեջ մտնելուց հետո՝ նաև Ռուսաստանի Դաշնությունից: 2014 թ. ամենամյա ազգային մրցանակաբաշխության շրջանակներում «Մինի Բասկոնիա»-ի «Լյուտիկ» ապրանքանիշի պահածոյացված այս սննդամթերքը ճանաչվել է սնկի և միրգ-բանջարեղենի պահածոների շուկայի առաջատար ապրանքանիշ:**



**Ե. Գաբուզյանը ծնվել է Երևանում, 1959 թ.: Ավարտել է ԵՊՀ-ի արևելագիտության ֆակուլտետը, այնուհետև՝ ԵՊՏՀ-ի տնտեսական վերլուծության բաժինը: Ծառայել է ՍՍՀՄ զինված ուժերում՝ արաբերենի թարգմանիչ: 1990-ական թվականներին անցել է աշխատանքի «ԻՄԱԿ» հայ-իտալական համատեղ ձեռնարկությունում՝ կոմերցիոն տնօրեն, 1997-99 թթ. աշխատել է Մոսկվայում: Հայաստան վերադառնալով՝ հիմնադրել է ընկերությունը և 2000 թվականից ներկրման գործունեություն ծավալել: Հադիպելով գործունյա տնօրենի հետ՝ զրուցեցի ներմուծվող սննդի տեսականիների, լաբորատոր հսկողության և առաջիկա աշխատանքների մասին:**

**-Պարոն Գաբուզյան, ինչպես որոշեցիք վերադառնալ Հայաստան և «Լյուտիկ» ապրանքանիշով պահածոների ներմուծմամբ զբաղվել:**

-Ես Մոսկվայում աշխատում էի «Բասկոնիա» ընկերության հետ: 1999 թվականին Մոսկվայից վերադարձա Հայաստան, փորձելով կապեր ստեղծել՝ ներմուծում կազմակերպեցի Իսպանական ֆիրմայի հետ, իմ ֆիրման անվանակոչեցի «Մինի Բասկոնիա» և մինչև հիմա աշխատում եմ: «Լյուտիկ» պահածոների ապրանքանիշը հիմնադրվել է ԱՄՆ-ում՝ 1997 թվականին և արտահանվում է 20 երկրներ:




**-Պահածոների ի՞նչ տեսականիներ եք ներմուծում:**

-Ներմուծում ենք «Լյուտիկ» ապրանքանիշով տարբեր տեսակներ, հիմնականում պահածոյացված պտուղ-բանջարեղեն՝ սունկ, եգիպտացորեն, կանաչ ոլոռ, վարունգ, մանրավարունգ, արքայախնձոր, կարմիր լոբի և ձիթապտուղ: Իսպանիայից ներմուծում ենք ձիթապտուղ: Վերջին տասը տարիների ընթացքում ձիթապտուղ ենք ներմուծում նաև Սիրիայում աշխատող գործարանից՝ չնայած պատերազմական պայմաններին մեր ներմուծումը շարունակվում է: Սունկը, կանաչ ոլոռը, եգիպտացորենը ներմուծում ենք Չինաստանից, մանրավարունգը՝ Հնդկաստանից, Արքայախնձորի կոմպոտը՝ Թաիլանդից, այս ամենը պահածոյացված պատրաստի վիճակում: Մեկ տարուց ավելի է, որ Ռուսական արտադրության կանաչ ոլոռ, եգիպտացորեն եմ ներմուծում փոքր տարաներով:

**-Ներմուծված տեսականիները սննդի անվտանգության ծառայության կողմից վերահսկվու՞մ են:**

-Վերջին տարիներին սննդի անվտանգության պետական ծառայության կողմից բավականին խստացրել են սննդի հսկողության պայմանները: Մինչև հիմա խնդիրներ չենք ունեցել,որովհետև այս 17 տարիների ներկայությունը շուկայում խոսում է այն մասին, որ մենք ձգտել ենք ներմուծել որակյալ սննդամթերք: Մեր կարգախոսն է՝ «Բարձր որակ, միջին գին»: Ես երբեք չեմ ներմուծել այն սննդամթերքը, որը իմ երեխաներն ու թոռները չեն ուտի:

Ներմուծված ապրանքը, սննդի անվտանգության ծառայությունը պարտադիր ստուգում է, եթե հարկ է համարում ուղարկել լաբորատորիա հետազոտության՝ պարտադիր ուղարկում է: Լաբորատոր հետազոտությունից հետո մեզ թույլ է տալիս վաճառք իրականացնել, այդ գործընթացը ողջունելի է:

**-Հայաստանում աճեցված բանջարեղենից պատրաստված պահածոներ իրացնու՞մ եք:**

-Երկու տարի առաջ ես թույլտվություն խնդրեցի և ստացա այն «Լյուտիկ» ապրանքանիշի հիմնադիրներից՝ գտնվում է ԱՄՆ-ում: Չինական շամպինյոնների ներմուծման փոխարեն, սկսեցինք պատվիրել հայկական շամպինիոնը, որն արտադրվում է Կոտայքի մարզի Աբովյան քաղաքում: Այնտեղ կան մեծ ջերմոցներ, ուր թարմ սունկ են աճեցնում և պահածոյացնում: Կարևորն այն է, որ մեր տեղական արտադրանքը շատ ավելի հաճելի և որակյալ է: Չնայած Չինաստանից տեղափոխելով՝ մաքսազերծումը մի քիչ ավելի էժան է ստացվում մեր հայկական արտադրանքից, սակայն հայկականն ավելի որակյալ է:

**-Ներմուծման աշխատանքներ իրականացնելու հետ կապված կա՞ն դրական փոփոխություններ:**

-Որպես ներմուծող՝ առավել ևս հաշվի առնելով այն փաստը, որ մեր երկրի ԵՏՄ-ի կազմ մտնելուց հետո, այն ավելի դյուրին է դարձել, ավելի հարմար ու հանգիստ: Նախկինում եթե կային խոչընդոտներ, հիմա դրանք աստիճանաբար քչանում են: Այսինքն, եթե ներմուծվում է որևէ ապրանք և այդ ապրանքի փաստաթղթերը համապատասխանում են ամբողջովին օրենսդրությանը, որն այսօր գործում է, երբեք խնդիր չի առաջանում: Ցանկությունս մեկն է՝ մեր երկիրը զարգանա ու բարգավաճի:

*Մանվել Կիրակոսյան*

## ԿՈՈՊԵՐԱՑԻԱ

# ՈՒՍԱՆԵԼԻ ՓՈՐՁ

***«Խոր Վիրապ գյուղատնտեսական ասոցիացիա» սպառողական կոոպերատիվը ձևավորվել է «Ամքոր» միջազգային կազմակերպության աջակցությամբ: Կոոպերատիվին անդամակցողների թիվն արդեն հասնում է 50-ի:***



«Խոր Վիրապ գյուղատնտեսական ասոցիացիա» սպառողական կոոպերատիվը զբաղվում է գյուղատնտեսական բազմաճյուղ գործունեությամբ: Թե՛ անասնաբուծության, և թե՛ բուսաբուծության ուղղությամբ, կոոպերատիվն արդեն հասել է զգալի հաջողությունների: Սպառողական կոոպերատիվի նախագահ Վիրաբ Մանուկյանի կարծիքով, հաջողություններն ու առաջընթացը համատեղ աշխատանքի արդյունք են: Կոոպերատիվի յուրաքանչյուր անդամ հստակ գիտի իր անելիքները, աշխատանքային կոնկրետ պարտավորությունները բաշխված են անդամների միջև: Նրանցից յուրաքանչյուրը շահագրգռված է ժամանակին և որակով կատարել իրեն հանձնարարված գործը: Ոչ ոք չի թերանում իր պարտականությունների կատարման մեջ, քանի որ լավ գիտի, որ իր բարեխիղճ աշխատանքի որակով է պայմանավորված համընդհանուր արդյունքը: «Համատեղ աշխատանքի արդյունավետությունը երևաց կոոպերատիվի գործունեության առաջին տարում, երբ հեկտարից ստացանք 60-100 ց ցորենի բերք: Հաջորդ տարի, կոոպերատիվին անդամակցելու նպատակով, դիմում ներկայացրեցին ևս 16 ֆերմեր: Կոոպերատիվի յուրաքանչյուր անդամ ինքնուրույն է մշակում իր հողակտորը, որոշում, թե անասնաբուծության ո՞ր ճյուղով զբաղվի, ի՞նչ մշակաբույսեր ցանի կամ ո՞ր պտղատեսակներն արտադրի, որպեսզի կարողանա բարձրացնել տնտեսության շահութաբերությունը: Սակայն միասին ենք լուծում դիզվառելիքի, պարարտանյութերի, թունաքիմիկատների, ինչպես նաև սերմացուի ձեռքբերման հարցերը»,- պատմում է կոոպերատիվի նախագահը: Նրա կարծիքով՝ իրացման գործընթացին այսօր շատ մեծ աջակցություն են ցուցաբերում Երևանի տարբեր հատվածներում կազմակերպված գյուղմթերքների շուկաները: Կոոպերատիվի անդամներն իրենց արտադրանքը հիմնականում իրացնում են Կասյան փողոցի վրա տեղակայված գյուղմթերքների շուկայում, որտեղ գները նպաստավոր են թե՛ գյուղացու, և թե՛ սպառողի համար: Պրն Մանուկյանը կարևորում է նաև այն հանգամանքը, որ այս դեպքում արտադրանքի վաճառքն իրականացնում է անմիջապես գյուղմթերք արտադրողը, չկան միջնորդ-վերավաճառողներ, ինչն էլ դրական ազդեցություն է թողնում գնագոյացման վրա: Թեև, ըստ պրն Մանուկյանի, ցանկալի կլիներ, և արդեն ժամանակն է, որպեսզի Երևանի տարբեր հատվածներում կոոպերատիվների համար բացվեին մասնագիտացված ֆիրմային խանութներ: Նրա կարծիքով՝ այս դեպքում գները կլինեին ավելի մատչելի, իսկ գյուղմթերք արտադրողն էլ իրացման խնդիր չէր ունենա: Արտադրված բերքի մի մասն էլ իրացնում են վերամշակող ընկերությունների միջոցով, որոնք, ցավոք, միշտ չէ, որ վճարումները կատարում են պայմանագրով նախատեսված ժամկետներում: Պատճառը՝ վերջիններիս մոտ ֆինանսական միջոցների սղությունը, իսկ երբեմն նաև՝ բացակայությունն է: «Խնդրի կարգավորման նպատակով պետությունը պետք է լրավճարներ հատկացնի վերամշակող ընկերություններին: Այլապես, վերամշակողներն էլ իրենց հերթին շատ հաճախ պատրաստի արտադրանքի իրացման հետ կապված խնդիրներ են ունենում, ինչի հետևանքով էլ չեն կարողանում գյուղացուն վճարել ժամանակին մթերված արտադրանքի դիմաց»,- եզրահանգում է Վիրաբ Մանուկյանը: Մինչդեռ, գյուղացին վարկ է վերցնում բանկերից հողի մշակության աշխատանքները կատարելու նպատակով, որի դիմաց ամենամսյա տոկոսներ է վճարում: Ստեղծված իրավիճակը, ըստ Վիրաբ Մանուկյանի, խոչընդոտում է տնտեսությունների զարգացմանը:



Ասոցիացիայի նախագահը նույնպես զբաղվում է դաշտավարությամբ, պտղաբուծությամբ, խաղողագործությամբ և անասնաբուծությամբ և սեփական փորձով գիտի առկա դժվարությունները: Կոոպերատիվն այսօր ունի հացահատիկահավաք կոմբայնի և եգիպտացորեն հնձող տեխնիկայի կարիք: Ի դեպ, առկա տեխնիկայով, մի փոքր տարբերակված գներով, ծառայություններ են կատարում նաև կոոպերատիվի ոչ անդամ ֆերմերների հողատարածքներում:

Սկզբնական շրջանում սպառողական կոոպերատիվի ձևավորման ու կայացման աշխատանքներին աջակցել է նաև Գյուղատնտեսական ասոցիացիաների ֆեդերացիան (ԳԱՖ): Իսկ տեխնիկայի համալրմանն աջակցել է «Ամքոր» միջազգային կազմակերպությունը, տրամադրելով տրակտոր, գութան, խոտ հավաքող մեքենա, այգեգործական սրսկիչներ և այլն: Վիրաբ Մանուկյանի տեղեկացմամբ, կոոպերատիվի անդամների մասնագիտական գիտելիքների բարձրացման նպատակով, պարբերաբար կազմակերպվում են ուսուցումներ: «Կոոպերատիվի բոլոր անդամներով աշխատում ենք մեկ ընտանիքի նման: Կոոպերատիվի գաղափարն ի սկզբանե լավ ընդունվեց բոլորիս կողմից: Առջևում գարնանային աշխատանքներն են, որին համատեղ ենք պատրաստվում: Միասին հեշտությամբ ենք հաղթահարում դժվարությունները»,- նշում է պարոն Մանուկյանը:

Ուշագրավն այն է, որ տարիների ընթացքում կոոպերատիվի անդամների միջև ևս աշխույժ համագործակցություն է ձևավորվել: Օրինակ՝ կոոպերատիվի խաղողագործությամբ զբաղվող ֆերմերներն իրենց արտադրանքը հանձնում են գինեգործությամբ զբաղվող մեկ այլ անդամի: Կոոպերատիվի որոշ անդամներ զբաղվում են սերմնաբուծությամբ և իրենց արտադրած բարձրորակ սերմերը տրամադրում են դաշտավարությամբ զբաղվող անդամներին: Պտղաբույծները համատեղ զբաղվում են նաև չրարտադրությամբ և արտադրանքի իրացմամբ: Համատեղ են կազմակերպում նաև արտահանումը: Մի խոսքով, ուսանելի ճանապարհ է անցել «Խոր Վիրապ գյուղատնտեսական ասոցիացիա» սպառողական կոոպերատիվը, որի փորձը կարելի է ներդնել նաև բազմաճյուղ գյուղատնտեսական գործունեությամբ զբաղվող, ինչպես նաև նոր ձևավորվող կոոպերատիվներում:

# ԿՈՈՊԵՐԱՏԻՎ Ն ԱՐՏԱԴՐՈՒՄ Է ԲՆԱՊԱՀՊԱՆՈՐԵՆ ՄԱՔՈՒՐ ԱՐՏԱԴՐԱՆՔ

***«Դպրաբակի մայրերի խումբ» կոոպերատիվը, որը գործում է ՀՀ Գեղարքունիքի մարզի Ճամբարակի տարածաշրջանում, մասնագիտացել է թեյաբույսերի, բուժիչ, վայրի խոտաբույսերի, ինչպես նաև չրերի արտադրության մեջ: Կոոպերատիվն ունի 6 անդամ, ովքեր համընդհանուր աշխատանքի արդյունքում, ստացված եկամուտների հաշվին, կարողանում են հոգալ իրենց ընտանիքների կարիքները:***

Կոոպերատիվի նախագահ Անահիտ Բալյանի տեղեկացմամբ, կանայք բուսատեսակները հավաքում են անտառային տարածքներից և դաշտերից, դրանք չորացնում են քամհարման և այլ եղանակներով, այնուհետև փաթեթավորում են և շուկայահանում: Կոոպերատիվի ձևավորմանը և աշխատանքների կազմակերպմանն աջակցել է EMPARD ծրագիրը՝ տրամադրելով էլեկտրական չորանոց: Այն հնարավորություն է տալիս կատարել ոչ միայն մրգերի, այլև որոշ բուսատեսակների չորացումը: Չրերը պատրաստում են հիմնականում կոոպերատիվի անդամների այգիներում աճող մրգատեսակներից: Աշնանը չորացրել են մեծ քանակությամբ սև սալոր և վայրի (անտառային) տանձ: Չորացնում են նաև՝ մասուր, լոբի, ավելուկ և



բանջարեղենի այլ տեսակներ: «Օրգանական արտադրանքի պահանջարկը մեծ է սպառողների շրջանում: Որակական հատկանիշների և մատչելի գների շնորհիվ, արտադրանքն արագորեն սպառվում է: Մեր միակ հիմնախնդիրը չրերի պահպանման համար սառնարանների անհրաժեշտությունն է, ունենք նաև փաթեթավորման սարքավորումների կարիք, ինչը հնարավորություն կտա բարելավել որակյալ արտադրանքի ապրանքային տեսքը»,- ասում է կոոպերատիվի նախագահը: Ի դեպ, մրգի, թեյաբույսերի և բուժիչ խոտաբույսերի մթերումներ կատարում են ոչ միայն Դպրաբակի, այլև՝ Ձորավանք, Այգուտ և Թթու ջուր համայնքների բույսերի հավաքչությամբ զբաղվող կանայք: կոոպերատիվին անդամակցելու ցանկացողների թիվը գնալով ավելանում է, քանի որ կանայք տեսնում են համատեղ աշխատանքի կազմակերպման արդյունավետությունը և առավելությունները: Բուսատեսակների մի զգալի մասն էլ մթերում են «Անթառամ» կոոպերատիվին, որն էլ իրականացնում է արտադրանքի վերջնական մշակումը, փաթեթավորումն ու վաճառքը: Ի դեպ, վերջինս կազմակերպում է նաև մասնագիտական ուսուցումներ՝ գիտելիքների հարստացման նպատակով:

«Մեր արտադրանքն առանձնանում է նրանով, որ այն բնապահպանորեն մաքուր է, մեր տարածաշրջանում չեն աշխատում գործարաններ, նույնիսկ ավտոմեքենաները սակավաթիվ են երթևեկում, ուստի օդի մեջ գազային արտանետումները չնչին են և որևէ ազդեցություն չեն կարող ունենալ բույսերի որակի վրա: Իսկ որոշ բուսատեսակներ հավաքում ենք հեռավոր սարամասերից»,- պատմում է Անահիտ Բալյանը: Առջևում գարնանային աշխատանքներն են, իսկ «Դպրաբակի մայրերի խումբ» կոոպերատիվի անդամներն արդեն նոր ծրագրեր են մշակում:

***Էջի նյութերը՝ Նելլի Սահակյանի***

ԱԳՐՈ Լրատու
Մարտ 7 - 15, 2017 թ.
թիվ 5 (2126)

## ԿՐԹԱԿԱՆ

# ԱՌԱՋԻԿԱՅՈՒՄ ԿՍԿՍՎԻ ՔՆՆԱՇՐՋԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ՓՈՒԼԸ

***ՀԱԱՀ Վանաձորի մասնաճյուղի 2017 թ. հեռակա ուսուցման պետական քննությունները և դիպլոմային նախագծերի (աշխատանքների, թեզերի) պաշտպանությունն ընթացքի մեջ են: Մասնաճյուղի տնօրեն Ալեքսանդր Հակոբյանի տեղեկացմամբ, առաջին փուլն ավարտվել է, և ուսանողներն ապահովել են գիտելիքների բարձր ցուցանիշներ:***



«Ագրոպարենային համակարգի հաշվապահական հաշվառում և աուդիտ» մասնագիտության 17 ուսանողներ, հանձնելով քննությունները, ստացել են դրական գնահատական (քննական հանձնաժողովի նախագահ՝ ՄԱԿ –ի գրասենյակի Համայնքային զարգացման ծրագրի փորձագետ Պարույր Ասատրյան): «Անտառային տնտեսություն և բնակավայրերի կանաչապատում» մասնագիտության գծով քննություն են հանձնել թվով 10 ուսանողներ, դրական գնահատական են ստացել բոլորը (քննական հանձնաժողովի նախագահ՝ ՀՀ գյուղատնտեսության նախարարության «Հայանտառ» ՓԲԸ –ի գլխավոր անտառագետ, կ.գ.թ. Ռուբեն Պետրոսյան):



«Անասնաբուժական սանիտարական փորձաքննություն» մասնագիտության թվով 8 ուսանող ևս ստացել են դրական գնահատական (քննական հանձնաժողովի նախագահ՝ ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության աշխատակազմի անասնաբուժության տեսչության պետ Հովհաննես Մկրտչյան): «Գյուղատնտեսական հումքի և պարենամթերքի փորձաքննություն, ստանդարտացում և սերտիֆիկացում» մասնագիտության թվով 9 ուսանողներ նույնպես ապահովել են բարձր ցուցանիշներ (քննական հանձնաժողովի նախագահ՝ «ՎԱՎԱՍ–գրուպ» ՍՊԸ սերտիֆիկացման մարմնի ղեկավար Ռուբեն Ասատրյան): Դրական գնահատական են ստացել նաև «Հողաշինարարություն և հողային կադաստր» մասնագիտության թվով 18 ուսանողներ (քննական հանձնաժողովի նախագահ՝ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի վերահսկողության վարչության անշարժ գույքի հաշվառման տվյալների նկատմամբ վերահսկողության բաժնի պետ Արթուր Ստեփանյան): Ինչպես տեղեկացրեց ՀԱԱՀ Վանաձորի մասնաճյուղի տնօրեն Ա. Հակոբյանը, առաջիկայում կսկսվի երկրորդ փուլը, որին ուսանողներն ակտիվորեն նախապատրաստվում են:

## ԱՐԺԵՔԱՎՈՐ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆ

# ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԷԿՈԼՈԳԻԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

***Լույս է տեսել գյուղատնտեսական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, էկոլոգիայի միջազգային ակադեմիայի թղթակից անդամ, ՀԱԱՀ-ի ագրոէկոլոգիայի ամբիոնի վարիչ Մերուժան Հայկարամի Գալստյանի «Գյուղատնտեսության էկոլոգիացման առանձնահատկությունները» ուսումնական ձեռնարկը, որը բովանդակային առումով, կարելի է դասել թեմային առնչվող մասնագիտական արժեքավոր աշխատությունների թվին:***




Այն իր մեջ ներառում է գյուղատնտեսական էկոհամակարգերի (ագրոէկոհամակարգերի) զարգացման պատմությանն առնչվող, նրանում ընթացող գործընթացների, ինչպես նաև՝ տեխնածին աղտոտված հողատարածքներից էկոլոգիապես անվտանգ սննդամթերքի ստացման, ագրոէկոհամակարգերի կայունության ապահովման և մարդկային գործոնի ազդեցությամբ առաջացած վտանգների փնասազերծման վերաբերյալ արտասահմանյան և հայրենական հետազոտողների առաջավոր տեխնոլոգիաների նկարագրությունները: Ուսումնական ձեռնարկը կարող է օգտակար լինել նաև մագիստրանտների և էկոլոգիական հիմնախնդիրներով զբաղվող մասնագետների համար:

Գրքի նախաբանում ներկայացված է պատմական ակնարկ՝ էկոհամակարգերի և գյուղատնտեսական համակարգերի վերաբերյալ: Հեղինակն անդրադարձել է ագրոէկոհամակարգի որոշիչ գործոններին, ռեսուրսներին, գործընթացներին և պահպանության ուղիներին: Հատկապես ուշագրավ են բույսերի աճի վրա տեխնածին աղտոտման, դրանց հետագա զարգացման, բերքատվության և բերքի որակի վրա ունեցած ազդեցության վերաբերյալ հեղինակի կատարած ուսումնասիրությունները: Առանձնակի ուշադրության են արժանացել հողերի ոռոգման էկոլոգիական, ինչպես նաև էկոլոգիական տեսակետից՝ գյուղատնտեսական անվտանգ արտադրության կազմակերպման հիմնախնդիրները:

Մերուժան Գալստյանը համահեղինակ է 140 գիտական աշխատանքների և ուսումնամեթոդական ցուցումների, որոնցից 3-ը՝ մենագրություններ են, 5-ը՝ ուսումնական ձեռնարկներ: Գիտության նվիրյալը պարգևատրվել է Մ. Լոմոնոսովի անվան մեդալով, «Գիտնականի աստղ» և Վ. Վերնադսկու անվան շքանշաններով, «Խաղաղ Կովկասի համար» և «Ֆրիտիոֆ Նանսենի անվան» ոսկե մեդալներով, ինչպես նաև ՀՀ մշակույթի նախարարության «Գրիգոր Նարեկացի» հուշամեդալով (2016 թ.):

Մերուժան Գալստյանի աշխատություններն ընթերցվում են մեծագույն հետաքրքրությամբ, աչքի են ընկնում ներկայացված փաստերի և տվյալների հավաստիությամբ, գիտական խորությամբ, ուշագրավ են՝ խոսքի մատչելիության առումով:

## ՏՈՀՄԱՅԻՆ ԳՈՐԾ

# ԱՐՎՈՒՄ Է ՀՆԱՐԱՎՈՐԸ՝ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՂՂՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՀԵԼՈՒ ՀԱՄԱՐ

***«Մխչյանի գյուղատնտեսական կենդանիների տոհմային գործի և արհեստական սերմնավորման կայան» ՊՓԲԸ-ի նախկին տնօրեն, այժմ արդեն սեփականատեր Սերյոժա Այվազյանի տեղեկացմամբ, դեռևս 2016 թ.-ից սկսվել է տոհմակայանի լուծարման գործընթացը, որը մոտենում է ավարտին:***

Երկարամյա աշխատանքային փորձ ու հմտություն ունեցող մասնագետը՝ կարևորելով կովերի արհեստական սերմնավորման աշխատանքների և տոհմային գործի բարելավման անհրաժեշտությունը, այժմ էլ շարունակում է անել հնարավորը, որպեսզի չփոխվի նախկին տոհմակայանի մասնագիտական ուղղվածությունը: Սերյոժա Այվազյանը սեփականաշնորհված տարածքում արդեն ձևավորել է փոքրիկ լաբորատորիա, բացի այդ, գնել է տոհմակայանում նախկինում արտադրված և պահպանված տարբեր ցեղատեսակների ցուլերի շուրջ 115 հազար չափաբաժին սերմնահեղուկները: «Դրանց պահպանման նպատակով, ամսական ծախսվում է շուրջ 100 000 – 150 000 դրամ գումար, սակայն կարծում եմ՝ կատարվող ծախսերը կարդարացվեն, քանի որ հանրապետության ֆերմերային տնտեսություններում մեծ է արհեստական սերմնավորման աշխատանքների կատարման անհրաժեշտությունը»,- եզրահանգում է մասնագետը:

Սերյոժա Այվազյանի հաշվարկներով, սերմնահեղուկի առկա քանակությունը կարող է բավարարել չորս, իսկ առավելագույնը՝ 6 տարի: «Կարծում եմ, մեր հանրապետությունում կրկին պետք է կազմակերպել սերմնահեղուկի արտադրություն, որպեսզի՛ գները լինեն մատչելի, և՛ ցեղատեսակները լինեն համապատասխանեցված տեղական կովերին»,- ասում է մասնագետը, ապա հավելում, որ սերմնահեղուկի արտադրման նպատակով նախկին տոհմակայանում ընտրվել էին այնպիսի ցեղատեսակի ցուլեր, որոնք հարմարվել էին մեր բնակլիմայական պայմաններին, իսկ սերունդներն էլ ապահովել մթերատվության բարձր արդյունք:

«Մեր հանրապետության գրեթե բոլոր մարզերում արոտավայրեր տանող ճանապարհները քարքարոտ են, և 600-700 կգ քաշ ունեցող կովերը չեն կարող հասնել հեռագնա արոտավայրեր: Այս առումով, մեզ մոտ նպատակահարմար է կովկասյան գորշ ցեղատեսակի կամ խառնածին կովերի բուծումը: Իսկ բարձր մթերատու և բարձրարժեք կենդանիներ ստանալու համար ցանկալի կլիներ, որպեսզի վերականգնվեր նախկին տոհմակայանի գործունեությունը կամ բացվեր նորը, որտեղ, սերմնահեղուկի ստացման նպատակով, կարելի էր պահել տոհմային լավագույն հատկանիշներով աչքի ընկնող տարբեր ցեղատեսակի ցուլեր: Եվ եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ մեկ ցուլից տարեկան կարելի է ստանալ 15 հազար չափաբաժին սերմնահեղուկ, ապա պարզ հաշվարկները ցույց են տալիս, որ այդ քանակությունը լիովին կարող է բավարարել հանրապետությունում առկա ֆերմերային տնտեսությունների պահանջարկը»,- նշում է Սերյոժա Այվազյանը:



Թվարկելով արհեստական սերմնավորման առավելությունները՝ մասնագետը նշում է, որ այս եղանակը հնարավորություն է տալիս բացառել գյուղատնտեսական կենդանիների վարակիչ հիվանդությունների տարածումը, ինչը շատ կարևոր է՝ առողջ նախիր, հետևաբար նաև՝ անասնապահական ծագման անվտանգ սննդամթերք ստանալու առումով: «Ցանկալի կլիներ, որպեսզի արհեստական սերմնավորման աշխատանքների և տոհմային գործի բարելավման նպատակով, բյուջեից ներդրվեին ֆինանսական միջոցներ, քանի որ գործընթացի կազմակերպումն առանց պետական հոգածության հնարավոր չէ: Տոհմային գործի կազմակերպումը հնարավորություն կտա հանրապետությունում բուծել թե՛ մսատու, թե՛ կաթնատու, և թե՛ կաթնամսատու ցեղեր: Բացի այդ, արդեն առկա է նաև սերմնավորող մասնագետների վերապատրաստման անհրաժեշտությունը»,- իր մտահոգությունն է կիսում Սերյոժա Այվազյանը:

Ինչ վերաբերում է սերմնահեղուկի և արհեստական սերմնավորման աշխատանքների գներին, նախկին տնօրենի տեղեկացմամբ դրանք չեն փոխվել: Ու թեև հնարավորինս աշխատանքները շարունակում են ընթանալ գրեթե նախկին հունով, այնուամենայնիվ Սերյոժա Այվազյանը նշեց, որ գործընթացին խոչընդոտող գործոններից մեկն էլ գյուղացու ցածր վճարունակությունն է, երբեմն նաև՝ անվճարունակությունը: Նրա տեղեկացմամբ, դեռևս պահպանվել են նախկին տոհմակայանի շինությունները, որտեղ պահվում էին տոհմային ցուլերը: Սակայն, տարիների ընթացքում, չշահագործվող այդ շինությունների վիճակն աստիճանաբար սկսել է վատթարանա և արդեն ենթակա են հիմնանորոգման, որը մեծ ներդրումներ է պահանջում:

«Որպես սրտացավ և գործի կարևորությունը գնահատող մասնագետ՝ կուզենայի որպեսզի ՀՀ Արարատի մարզում վերականգնվեր նախկին տոհմակայանի գործունեությունը, կազմակերպվեր տոհմային ցուլերի բուծումը, կերի բազայի ստեղծումը, ինչպես նաև արհեստական սերմնավորման աշխատանքների կատարման նախկին պահանջարկը: Այդ դեպքում մեր հանրապետությունում անասնաբուծությունը, և մասնավորապես՝ խոշոր եղջերավոր կենդանիների բուծումը, կապահովի աննախադեպ արդյունք: Պետական աջակցության առկայության դեպքում, ես պատրաստ եմ վերսկսել այդ գործընթացը»,- համոզված ասում է մասնագետը:

*Էջի նյութերը՝ Նելլի Սահակյանի*

**ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ**

# ԵՎՐՈՊԱՑԻՆԵՐԸ ՀԱՃՈՒՅՔՈՎ ԿՃԱՇԱԿԵՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԽԱՎԻԱՐԸ

***Վերջին տարիներին մեր հանրապետությունում զգալիորեն ավելացել և հարստացել է ձկնամթերքի տեսականին: Եվ եթե տարիներ առաջ տեղական սպառողը ճաշակում էր միայն ներկրված սև և կարմիր խավիարներ, ապա ներկայումս դրանք արտադրվում են նաև մեր ձկնաբուծական լճակային տնտեսություններում աճեցվող ձկնատեսակներից: Ուշագրավն այն է, որ տեղական արտադրանքը, համային և որակական հատկանիշներով, ոչ միայն չի՛ զիջում ներկրվածին, այլև մրցունակ է միջազգային շուկայում:***



«Հայր և որդի Բունիաթյաններ» ՍՊԸ-ն, որը գործում է ՀՀ Արմավիրի մարզի Գայ համայնքում, արդեն ճանաչում ունի ոչ միայն իր արտադրած ձկնատեսակներով (թառափ, իշխան, կարմրախայտ, ծածան և այլն), այլև վերջերս արտադրության մեջ մտած կարմիր և սև խավիարներով: «Թառափի բեղմնավորված ձկնկիթը ներմուծում ենք ՌԴ-ից, իշխանինը՝ Ֆրանսիայից, տնտեսությունում կազմակերպվում է դրանց ինկուբացիան, իսկ ստացված մանրաձկները աճեցնում ենք մինչև արտադրական քաշի հասնելը»,- պատմում է ընկերության հիմնադիր տնօրեն Արմեն Բունիաթյանը, ով նաև «Հայ ձկնաբույծների միավորում» ՀԿ-ի նախագահն է: Այս ընկերությունը տնտեսական առաջընթացի և զարգացման շատ մեծ հեռանկարներ ունի, սակայն, Արմեն Բունիաթյանի կարծիքով, նոր ծրագրերը հնարավոր է իրագործել միայն պետական աջակցության պարագայում: Կարևորվում է ձկնամթերքների արտահանման խթարումը, ջրի սակագնի իջեցումը, սուբսիդավորված վարկերի տրամադրումը: «Քանի որ ձկնաբուծական տնտեսություններում ներդրվել է ջրի խնայողության նոր համակարգ, տեղադրված սարքավորումների աշխատանքի արդյունքում ծախսվում է մեծ քանակությամբ էլեկտրաէներգիա: Թեև այդ համակարգը թույլ է տալիս քիչ քանակությամբ ջուր օգտագործելու դեպքում ստանալ ձկան բարձր արտադրանք, սակայն այս դեպքում մեծանում են հոսանքի ծախսերը: Ցանկալի կլինի, որպեսզի ձկնաբուծության ոլորտում էլեկտրաէներգիայի ծախսը սուբսիդավորվի, որպեսզի ձկնաբուծական տնտեսությունները կարողանան շարունակել իրենց գործունեությունը: Ցավոք, այսօր արդեն շատ տնտեսություններ չկարողանալով կատարել ծախսված հոսանքի դիմաց վճարումները՝ փակվել են: Խնդիրն անհապաղ կարգավորման կարիք ունի: Պետք է համապատասխան պայմաններ ստեղծվեն ձկնաբուծության ոլորտի զարգացման համար», - ասում է Արմեն Բունիաթյանը, ապա հավելում, որ պատերազմական իրադրությունում գտնվող մեր երկրի համար ձկնային պաշարների առկայությունը հույժ կարևոր է: «Պետք է պայմաններ ստեղծվեն բարձրարժեք այս սննդատեսակի արտադրության զարգացման և ընդլայնման համար: Ինչ վերաբերում է սննդային արժեքին, ապա այս առումով ձկնամթերքը չունի իր համարժեքը: Օրինակ՝ սև խավիարն իր մեջ պարունակում է օրգանական երկաթ՝ Fe, որը մարդու օրգանիզմի համար հեմոգլոբինի աղբյուր է՝ այն հարստացնում է թթվածնով: Կարծում եմ, պետք է անել հնարավորը՝ ձկան և ձկնամթերքի արտադրությունը խթանելու համար»,- նշում է «Հայ ձկնաբույծների միավորում» ՀԿ նախագահը:

Ինչ վերաբերում է արտահանմանը, ապա հայկական խավիարը մեծ պահանջարկ ունի եվրոպական երկրներում, քանի որ դրանք ներկայացվել են միջազգային տարբեր ցուցահանդեսներում և հավանության են արժանացել կազմակերպված համտեսների ընթացքում: Արմեն Բունիաթյանի կարծիքով, հայկական ձկնամթերքի արտահանման դեպքում, իրացման խնդիրներ չեն լինելու, քանի որ եվրոպացիները հաճույքով կճաշակեն հայկական խավիարը, որի համը դեռ չեն մոռացել:

***Նելլի Սահակյան***

**ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ**

# ԶՈՎՈՒՆԻԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՂԵԿԱՎԱՐՈՒՄ Է ՆՈՐ ԸՆՏՐՎԱԾ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԸ

***Շուրջ 200 տարվա պատմություն ունի Զովունի գյուղը, սկզբնական շրջանում այն տեղակայված է եղել Ապարանի շրջանում: 1965 թվականին գյուղի բնակչությունը տեղափոխվել և բնակություն հաստատել Կոտայքի մարզի ներկայիս Զովունի գյուղում: Համայնքում այսօր գործում են՝ 1975 թ. հիմնադրված մշակութային կենտրոն, 1969 թ.՝ դպրոց, գրադարան և մանկապարտեզ:***

***Նոյեմբեր ամսին կայացած համայնքի ղեկավարի ընտրությունների արդյունքում՝ համայնքն այսօր ունի նոր ղեկավար՝ Վրույր Սիմոնյանը: «Ի՞նչ աշխատանքներ են կատարել համայնքում այս 4 ամիսների ընթացքում, և առաջիկայում ի՞նչ անելիքներ կան, որ պետք է իրականացվեն», Ագրոլրատուի թղթակիցը զրուցել է Զովունի համայնքի ղեկավարի հետ:***



**-Պարոն Սիմոնյան, ի՞նչ աշխատանքներ եք հասցրել կատարել, որոնք առաջնային էին համայնքի բնակչության համար:**

-Արդեն հասցրել ենք տասը դիտահորեր փոխել, կոյուղաջրերը լցվում էին նկուղային հարկեր, 25 մլն. դրամի ներդրում ենք կատարել՝ ցանցը վերանորոգելու համար: Ուշ աշնանը շուրջ 300 ծառ ենք տնկել դպրոցի տարածքում: Փոփոխություններ կան մշակութային կենտրոնում և մանկապարտեզում: Անմխիթար վիճակում էր գտնվում երաժշտական դպրոցը, նախատեսել ենք առաջիկայում վերանորոգման աշխատանքներ իրականացնել:

**-Տեղյակ ենք, որ համայնքում ջրի հետ կապված խնդիրներ կան, այդ ուղղությամբ աշխատանքներ ձեռնարկվու՞մ են:**

- Համայնքում և՛ խմելու և՛ ոռոգման ջրերի հետ կապված խնդիրներ ունենք: Թաղամասեր կան, որ խմելու ջուրը օրվա ընթացքում 2 ժամ է բաց թողնվում: Հարցը հրատապ է, փորձում ենք այդ ուղղությամբ աշխատանքներ իրականացնել:

Նոր թաղամասեր կան, որտեղ ոռոգման ջրագծեր չկան, համակարգն էլ շարքից դուրս է եկել, երբեք չի վերանորոգվել: Հուսով ենք, որ նոր թաղամասում շուտով ոռոգման ջրի հարցը կլուծվի: Արդեն պայմանավորվել ենք ՋՕԸ-ի տնօրինության հետ, 400 մ խողովակ կփոխվի գյուղում: Զովունի համայնքում կիսով չափ է լուծված գյուղամիջյան լուսավորության հարցը: Նոր թաղամասում և եզդի բնակիչներով բնակեցված թաղամասում ևս գազաֆիկացում չկա, ուստի աշխատում ենք այդ խնդիրներին էլ լուծումներ տալ:

***Համայնքի երեխաների, պատանիների, երիտասարդների մարզական, մշակութային առօրյան ներկայացրեց Զովունիի մշակութային կենտրոն ՀՈԱԿ-ի տնօրեն Նարեկ Արշակյանը:***

-2008 թ. աշխատում եմ որպես մշակութային կետրոնի տնօրեն: ՀՀ մշակույթի նախարարության կողմից բազմաթիվ մրցանակների ենք արժանացել. Զովունին ճանաչվել է հանրապետության մշակութային լավագույն համայնք: Շուրջ 150 երեխաներ ընդգրկված են տարբեր խմբերում՝ Զովունի մշակութային կենտրոնի պարային համույթ՝ Ս. Նավասարդյան, երգի խմբակ՝ Ս. Ավետիսյան: Գործում է նաև Զովունիի ֆուտբոլային ակումբը, կարատեի խմբակը, (մարզիչներ՝ սև գոտի 5-րդ դան Կ. Հարությունյան, սև գոտի առաջին դան Գ. Բաղդասարյան): Ունենք նաև գրադարան՝ 17200 գրքերով: Բռնցքամարտի երկու խմբեր ունենք, մարզիչներ՝ (ՀՀ վաստակավոր մարզիչ Ս. Սողոմոնյան, սպորտի վարպետ Ս. Հայրապետյան, ՀՀ սպորտի վարպետ՝ եվրոպայի մրցանակակիր Տ. Սողոմոնյան):



Համայնքի ղեկավարն ամեն ինչ անում է, որ մարզական, մշակութային կյանքը հնարավորինս ակտիվ լինի: Պարոն Սիմոնյանը խոստացել է, որ այս տարի մշակութային կետրոնում ջեռուցում կանցկացվի: Մեր բռնցքամարտի սանը մասնակցելու է միջազգային մրցաշարի, մարզիկի ֆինանսավորումը պետությունը հոգում է, իսկ մարզիչի ֆինանսական ծախսերը խոստացել է լուծել համայնքի ղեկավարը: Մեր համայնքում գործում է նաև երիտասարդական խորհուրդ, երիտասարդների խնդրանքով գործում է անվճար ուսանողական երթուղի:

Զովունիի մանկապարտեզ ՀՈԱԿ-ի վարիչ Նելլի Մխիթարյանն էլ նշեց, որ 2017 թվականից աշխատում է մանկապարտեզում, այն վերանորոգված է և ջեռուցվում է: Այս պահին 90 երեխա հաճախում է մանկապարտեզ, 20-ից ավելի երեխաներ հերթագրված են: Սննդի անվտանգության տեսչությունը պարբերաբար վերահսկում է իրենց աշխատանքները:

«Նախատեսել ենք 4-րդ խմբասենյակը բացել, (որպես գույք՝ 25 մահճակալ, ներքնակներ, խաղալիքներ ենք ձեռք բերելու ապրիլ – մայիս ամիսներին), այդ հարցում մեզ կօգնի համայնքապետարանը: Անհրաժեշտություն կա բույսերով զինել պուրակը, ունենք տարածք, որտեղ ցանկալի է ունենալ բացօթյա խաղահրապարակներ, կարծում ենք, համայնքի ղեկավարը այդ հարցում ևս կօգնի», - հավելել է Ն. Մխիթարյանը:

Զովունիի բնակիչները հպարտանում են իրենց բարձրակարգ բռնցքամարտիկով: Կորյուն Սողոմոնյանը հայտնի է նաև ամբողջ աշխարհում: Համայնքում տեղեկացանք, որ նա դարձել է երիտասարդների աշխարհի առաջնության չեմպիոն:

***Մանվել Կիրակոսյան***

ԱԳՐՈ Լրատու
Մարտ 7 - 15, 2017 թ.
Թիվ 5 (2126)

## ՄԱՍՆԱԳԵՏԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ

# ՊՏՂԱՏՈՒ ԱՅԳԻՆԵՐԻ ՎԱՂ ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ԽՆԱՄՔԸ

*Գյուղացիական տնտեսությունների առաջնահերթ խնդիրը՝ սեղմ ժամկետներում վաղ գարնանային աշխատանքների անցկացումն է: Ագրոտեխնիկական միջոցառումների ճիշտ և որակով կիրառումն այն կարևորագույն գործոններից է, որը նպաստում է պտղատու ծառերի բնականոն աճին, զարգացմանն ու պտղաբերմանը:*

Վաղ գարնանը այգում կատարվող առաջին կարևոր ագրոտեխնիկական միջոցառումներից են՝ պտղատու ծառերի ձևավորումն ու էտը, որոնք պետք է անցկացվեն խնամքով, մեծ պատասխանատվությամբ և ճշգրտորեն՝ հաշվի առնելով պտղատեսակների և սորտերի կենսաբանական առանձնահատկություններն ու ծառերի հասակը: Երիտասարդ ծառերը ձևավորելիս, հիմնական խնդիրը համահավաք, ամուր կմախքով, սահմանափակ քանակի կմախքային ճյուղերով (5-7 հատ) սաղարթի ստեղծումն է: Երբեք չպետք է մոռանալ, որ սաղարթի ճիշտ ձևավորումը նպաստում է ծառերի վաղ պտղաբերմանն ու բարձր բերքատվությանը: Մինչդեռ, երիտասարդ ծառերի ուժեղ էտը, մասնավորապես՝ ճյուղերի խորը կարճացումը, ձգձգում է պտղաբերող կազմավորումների առաջացումը, իսկ 1-2 տարով էլ՝ ծառերի ժամանակին բերքատվության անցումը: Բերքատվության սկզբնական շրջանում, երբ ծառերի աճն ուժեղ է, հարկ է 40-45 սմ-ից բարձր աճ ունեցող շվերը կարճացնել՝ 1/4-1/3-ի չափով, հեռացնել սաղարթը խտացնող, իրար վրա ստվեր գցող, թույլ և կախ ընկած ճյուղերը: Երբ աճը սկսում է աստիճանաբար դանդաղել ՝ հասնելով 30-35 սմ-ի, անհրաժեշտ է շվերի կարճացումը դադարեցնել և կիրառել միայն նոսրացում: Իսկ երբ աճեցողությունը դանդաղում է և 15-20 սմ-ից չի անցնում, նորից անհրաժեշտություն է զգացվում շվերն ու ճյուղերը կարճացնել՝ նպաստելով աճի ուժեղացմանն ու նոր ճյուղերի առաջացմանը: Կապված ծառերի հասակի հետ՝ սաղարթը ձգվում է դեպի վեր, մերկանում են կմախքային ճյուղերը, կրճատվում ասիմիլյացիոն և պտղաբերող մակերեսները, պտղաբերությունը հիմնականում կենտրոնանում է սաղարթի ծայրամասերում: Այս դեպքում արդեն պահանջվում է երիտասարդացնող էտ, որը լինում է թույլ, չափավոր և ապա՝ ուժեղ: Թույլ երիտասարդացնող էտի ժամանակ կմախքային և կիսակմախքային ճյուղերը պետք է կարճացնել 2-3 տարեկան, իսկ չափավոր երիտասարդացման ժամանակ՝ 4-6 տարեկան բնափայտի վրա: Ներկայումս, խորհուրդ չի տրվում պտղատու ծառերի ուժեղ երիտասարդացում, նպատակահարմար է ծերացած ծառերը քանդել և տնկել նորերը: Ծառերի երիտասարդացման ժամանակ պետք է մեծ ուշադրություն դարձվի այգու հողի մշակության, պարարտացման և ոռոգման աշխատանքներին, հակառակ պարագայում՝ երիտասարդացնող էտը կհանգեցնի բացասական հետևանքների: Եթե դիտվում է տարբեր պտղատեսակների ծառերի ցրտահարվածություն, որի աստիճանի ճիշտ որոշումը դժվար է, այդ դեպքում ծառերի էտը պետք է կատարել բողբոջների բացվելուց և աճի սկսվելուց հետո, երբ լրիվ դրսևորվում են վնասվածության չափերը:

Վաղ գարնանը կարևորվում է պտղատու ծառերի սանիտարական էտը և բույսերի հիվանդությունների և վնասատուների դեմ պայքարի միջոցառումներ. կատարվում են բնի, կմախքային ճյուղերի մաքրման աշխատանքներ՝ մետաղյա քերիչներով, այնուհետև սպիտակեցում՝ կրակաթի ջրային լուծույթով:

Այգու հողի քեշի գալուն պես, պետք է սկսել միջշարքային և մերձբնային տարածությունների մշակությունը, ինչը նպաստում է ծառերի արմատների տարածման սահմաններում խոնավության կուտակմանն ու պահպանմանը, օդափոխության լավացմանը, մոլախոտերի ոչնչացմանն ու հողի կեղևակալման վերացմանը: Եթե այգին աշնանը չի վարվել, ապա միջշարքային տարածություններում վարը հնդավորների մոտ կատարվում է 20-22 սմ, կորիզավորների մոտ՝ 16-18 սմ, իսկ ծառերի մերձբնային տարածությունում՝ 10-12 սմ խորությամբ՝ չվնասելով արմատային համակարգը: Այգու հողի միջշարքային տարածությունների ճիշտ օգտագործումը և մշակվող բույսերի ճիշտ հաջորդականությունը զգալիորեն բարձրացնում են պտղատու ծառերի աճն ու պտղաբերությունը: Պտղատու այգիներում պետք է կիրառել հողի պահպանման այնպիսի համակարգեր, որոնք ոչ միայն կկասեցնեն բերրիության անկումը, այլև կնպաստեն դրա բարելավմանը: Սովորաբար, երիտասարդ այգիներում խորհուրդ է տրվում մշակել այնպիսի բուսատեսակներ, որոնք կնպաստեն հողի բերրիության բարելավմանն ու լրացուցիչ եկամտի ստացմանը:



Պտղաբերող այգիներում հողը պահպանելու համար նպատակահարմար է կիրառել կանաչ պարարտացման, սև ցելի և արհեստական ճմակալման համակարգերի առավել արդյունավետ հերթականություն: Այստեղ կանաչ պարարտացումը պետք է լինի առաջնային, սև ցելը՝ երկրորդական, իսկ արհեստական ճմակալումը կրի պարբերական բնույթ:

Եթե այգին աշնանը չի պարարտացվել, ապա գարնանը, վարի և բաժակների փորի ժամանակ, երիտասարդ այգիների 1 հա-ին տրվում է 10-15 տ փտած կամ կիսաքայքայված գոմաղբ, միաժամանակ՝ ազոտական, ֆոսֆորական և կալիումական 45-60 կգ, իսկ պտղաբերող այգիներին՝ համապատասխանաբար՝ 15-20 տ գոմաղբ, 90-120 կգ հանքային պարարտանյութեր՝ ազդող նյութի հաշվով: Ազոտական պարարտանյութերով սնուցումը կատարվում է հետևյալ չափաբաժիններով. երիտասարդ այգիներում՝ 1 հա-ին՝ 30-40 կգ, իսկ պտղաբերող այգիներում՝ 50-60 կգ՝ ազդող նյութի հաշվով: Պարարտանյութերը հող են մտցվում 25-30 սմ խորությամբ, որի դեպքում արմատները կարողանում են անհրաժեշտ չափով օգտվել դրանից: Միաժամանակ զգալիորեն բարձրանում է պարարտացման և սնուցման արդյունավետությունը: Այգու պարարտացմանն ու հողի մշակությանը զուգընթաց, պատրաստում են ոռոգման ակոսներ և ձեռնամուխ լինում այգիների առատ ջրին, որը նպաստում է ծառերի օրգաններում ջրի և սննդանյութերի տեղաշարժի արագացմանը, վնասվածության հետևանքների վերացմանը, բերքի պահպանմանն ու պտուղների խոշորացմանը: Ծառերի ոռոգումից մեծապես կախված է նաև կայուն և բարձր բերքի ստացումը: Պտղատու ծառերը ջրի մեծ պահանջ են զգում, հատկապես՝ տերևների և շվերի առաջացման, բուռն աճի ու պտղալիցի, ինչպես նաև՝ պտղաբողբոջների հիմնադրման և ձևավորման ժամանակ: Խորհուրդ է տրվում առաջին ջուրը տալ վաղ գարնանը՝ մինչև բողբոջների բացվելը, երկրորդը՝ ծաղկաթափից, երրորդը՝ պտղաթափից անմիջապես հետո: Ջրումների քանակը, ժամկետները, չափաբաժինները կախված են աճման միջավայրի պայմաններից, պտղատեսակների կենսաբանական առանձնահատկություններից, պատվաստակալից և ծառերի հասակից: Հանրապետությունում մշակվող հիմնական պտղատեսակների պահանջը ջրի նկատմամբ միատեսակ չէ, առավել պահանջկոտ են՝ սալորենին, տանձենին, խնձորենին, կեռասենին, ավելի քիչ՝ բալենին, դեղձենին, ծիրանենին և նշենին:

***Գագիկ Սանթրոսյան***
*ՀԱԱՀ Ագրոնոմիական ֆակուլտետի դեկան, գյուղատնտեսական գիտությունների թեկնածու, դոցենտ*

## ԾՈՎԱԲՈՂԿ ԳՅՈՒՂԱԿԱՆ (ՍՈՎՈՐԱԿԱՆ)

### *Հայկական փարանուններ - ժախուկ, խրեն, կծվիչ, կրեն, քթաո*

***Դեղաբույսի նկարագրությունը:*** Կաղամբազգիների կամ խաչածաղկավորների ընտանիքին պատկանող, մինչև 100 սմ բարձրության, տերևակալած ցողունով բազմամյա խոտաբույս է: Ունի հողի մեջ խոր թափանցող մսոտ, սպիտակ արմատներ, խոշոր ու լայն, նշտարաձև, ալիքաեզր, արմատամերձ տերևներ: Ծաղիկները մանր են ու սպիտակ, պտուղը կլոր, երկբուն պատիճ է: Ծաղկում է հունիս-հուլիս, պտղակալում՝ օգոստոս-սեպտեմբեր ամիսներին: Մեր հանրապետությունում աճում է միայն 1 տեսակը՝ (սովորական ծովաբողկը), որը որպես մոլախոտ, աճում է գետեզրերին, թաց մարգագետիններում, տնամերձ հողամասերում և այլուր՝ հաճախ տալով հոծ բուսուտներ: Բազմանում է արմատաշիվերով: Պահանջկոտ չէ լույսի և ջերմության նկատմամբ, աճի համար նախընտրում է ավազահումուսային հողերը:



***Քիմիական բաղադրությունը:*** Արմատը պարունակում է մինչև 16,3 % շաքար, օսլա, խեժանյութ, գլիկոզիդ սինիգրին, ֆերմենտ միրոզին: Վերջինս՝ ազդելով գլիկոզիդի վրա՝ առաջացնում է գլյուկոզա և ծծմբակալիումական թթու աղ: Վերջինով էլ պայմանավորված է ծովաբողկի սուր համն ու հոտը: Կալիումական և երկաթային աղերի պարունակությամբ ծովաբողկը գերազանցում է այնպիսի բանջարաբույսերին և մրգերին՝ ինչպիսիք են՝ լոլիկը, սամիթը, լոբին, սոխը, սխտորը, գազարը, կարտոֆիլը, բալը, նարինջը, կիտրոնը, մանդարինը և այլն:

***Բուժական նշանակությունը:*** Բուժման նպատակով գլխավորապես օգտագործում են բույսի արմատները, որոնք աշնանը բահով հանում են և հողոտ վիճակում պահում նկուղում՝ ավազի մեջ՝ 7-8 ամիս: Ծովաբողկը որպես համեմունք՝ ունի կիրառման շատ հին պատմություն: Դեռևս մ. թ. առաջին դարերում Միջերկրականի ծովամերձ երկրներում այն լայնորեն օգտագործվել է մսեղենը և ձկնեղենը համեմելու համար, իսկ ավելի ուշ՝ օգտագործվել է նաև որպես դեղաբույս: Հնդկաստանում ծովաբողկը դեռևս շատ հնուց օգտագործել են որպես օրգանիզմի ուժերը խթանող, միզամուղ և գոտկացավերի դեպքում՝ որպես փարատող միջոց: Դեղաբույսի մասին 1785 թ. ուշագրավ տվյալներ է տալիս ռուս խոշոր կլինիցիստ Ն. Մ. Ամբոդիկ-Մաքսիմովիչը: Նա նշում է, որ բույսը թարմ վիճակում ունի ախորժակը գրգռող հատկություն, միզամուղ է, արյան շրջանառությունը կարգավորող, «արյունը մաքրող» բույս է: Նա բույսի արմատը և նրա թարմ հյութը առաջարկել է որպես «գերազանց օգտակար» միջոց՝ լնդախտի, ջրգողության, քարային հիվանդության, հազի ժամանակ: Արմատը ընդունելիս, նա առաջարկել է այն կուլ տալ դեղահաբերի նման մանրացրած ձևով, որպեսզի չգրգռի ստամոքսը՝վրայից ըմպելով խաղողի հյութ կամ շաքարաջուր:

Հայրենական ժողովրդական բժշկության մեջ թարմ արմատը և դրանից ստացվող հյութը համարվում են որպես ախորժակը լավացնող, միզամուղ, հակալնդախտային միջոցներ: Արմատի խյուսն իր ազդեցությամբ չի զիջում մանանեխին և կիրառվում է ռադիկուլիտների, գոտկացավերի, տարբեր տեսակի մկանացավերի դեպքերում և այլն: Արմատի թարմ հյութը և ջրաթուրմը դրական արդյունք են տալիս հեպատիտների, թերսեկրետոր գաստրիտների, պոդագրայի, ռևմատիզմի, վերին շնչուղիների կատառի դեպքում, իսկ ողողման ձևով՝ ստոմատիտների, ատամնացավի և անգինայի ժամանակ: Գիտականորեն հաստատված է ծովաբողկի մանրէասպան և նախակենդանիների վրա կործանարար ազդեցությունները: Ջրիկ մզվածքը իջեցնում է արյան ճնշումը, բուժում սնկային հիվանդությունները:

Դեղաբույսը լայնորեն տարածված է նաև Ֆրանսիայում: Այն լայն կիրառում ունի նաև հոմեոպաթիայում: Շնորհիվ արմատում պարունակվող մեծ քանակի լիզոցիմի՝ մաքուր հյութով կամ ջրաթուրմով մաքրում են թարախային վերքերը: Լիզոցիմը վաղուց հիմնավորվել է բժշկական պրակտիկայում որպես լայն մասշտաբի ներգործող հակամիկրոբային միջոց: Արմատի պատրաստուկները ո՛չ միայն մաքրում են դեմքը բծերից ու պեպեններից, այլև դեմքին տալիս են փափկություն և սպիտակություն. որպես ընդհանուր կազդուրիչ միջոց՝ առաջարկվում է պարբերաբար ընդունել ճաշի հետ՝ մտավոր և ֆիզիկական ծանր աշխատանքի պայմաններում: Ծովաբողկն անվանում են «բանջարանոցային պենիցիլին»՝ շնորհիվ նրա հակաբիոտիկների հատկության, մի հատկանիշ, որը դրական է անդրադառնում մի շարք բորբոքային պրոցեսների վրա:

***Այլ օգտակար հատկանիշները:*** Ծովաբողկը հիանալի համեմունք է մսեղեն, ձկնեղեն և այլ տեսակի ճաշերի մեջ: Ինչպես արմատը, այնպես էլ տերևներն օգտագործում են վարունգի, լոլիկի, սնկի և այլ մթերքների թթուների մեջ որպես կոնսերվանտ և համեմիչ: Ռուս ժողովուրդը հացի և ճաշի հետ օգտագործում է ծովաբողկի արմատի, սխտորի և լոլիկի խառնուրդը՝ 1:3:30 հարաբերությամբ: Այս խառնուրդը՝ մսաղացով անցկացնելուց հետո, լցնում են ամանների մեջ, փակ վիճակում պահում սառը տեղ, ապա օգտագործում որպես ախորժակը գրգռող միջոց:

## ՀԵՏԱՔՐՔԻՐ Է ...

# ՆԱՐԴՈՍ

***Հնագույն ժամանակներից օգտագործվում է ժողովրդական բժշկության մեջ: Կիրառվել է ոջիլների դեմ: Բույսի ծաղկաբույլը, փերևը և ցողունը փոշիացրել և օգտագործել են մոմերի մեջ: Այրված մոմի բուրմունքը վանում է միջատներին: Ծաղիկները հավասար քանակությամբ խառնել են պապրինջի և գայլուկի հետ, պատրաստել «քնաբեր» բարձիկներ:***

Ասում են նարդոսի, դափնու, վարդի, մեխակի, սուսամբարի, թթվիճի (betonica), մշկընկույզի խառնուրդը կարող է բուժել ցանկացած հիվանդությունից: Այս «մոգական» խառնուրդը լցրել են հատուկ պարկիկի մեջ և կախել չոր տեղում, և հպել հիվանդ մասին՝ հատկապես միգրենի դեպքում:

Շրթնածաղկավորների ընտանիքի (Labiatae) բույս է, տարբերվում են 25-30 ենթատեսակ: Բնական պայմաններում աճում է Միջերկրական ծովի ժայռոտ վայրերի կավաավազային լանջերին և Հնդկաստանում: Հիմքից սկսած՝ խիտ ճյուղավորված է, ծեր ծաղկակիր ճյուղերը տարածված են անկյան տակ, նոր զարգացող երիտասարդ բազմաթիվ ցողուններն ուղղաձիգ են: Տերևները նստադիր են՝ երկարավուն, նշտարաձև կամ գծային, թիթեղն ամբողջաեզր է: Ունի մինչև 60 սմ բարձրության հասնող կիսաթփի տեսք: Զարգացման շրջանում տերևի գույնը փոխվում է՝ սկզբից այն մոխրագույն է, հետո՝ կանաչ, տակի երեսից ծածկված է գեղձային մազիկներով:

Ծաղկակիր ցողուններն ավելի երկար են, գագաթային ոչ համաչափ հասկատիպ ծաղկաբույլերում: Ծաղկի բաժակը խողովակաձև է, մուգ մանուշակագույն, խիտ թավապատ, ծաղկապսակի վերին շուրթը կազմված է՝ երկու, իսկ ներքևինը՝ երեք ավելի փոքր թիակներից: Պտուղը պարունակում է չորս սև ընկուզիկներ: Մեղրատու բույս է:

Նարդոսը բնության մեջ գոյություն ունեցող առավել բուրումնավետ բույսերից մեկն է: Այդ է պատճառը, որ բույսի ծաղիկները չեն օգտագործվում սննդի մեջ, որպես համեմունք. հարգի են բույսի նվազ բուրումնավետ տերևները: Մշակովի տեսակներից համեմունք չեն պատրաստում:

Դեռ չբացված ծաղկաբույլերից ստանում են յուղ, որը մեծ քանակություններով օգտագործվում է օճառի և օծանելիքի արտադրության մեջ: Բույսի լատիներեն (Lavandula) անվանումը կապված է այն հանգամանքի հետ, որ հին Հռոմում այն ավելացրել են լոգանքի ջրին՝ lavare-նշանակում է՝ լվացվել: Տնտեսական-արտադրական նպատակներով. այժմ մշակվում է Ֆրանսիայում, Հունգարիայում, Սլովենիայում, Խորվաթիայում, Ուկրաինայում, Կրասնոդարի մարզում, Վրաստանում և այլուր:

Բազմանում է սերմերով, անդալիզով, բույսի բաժանումով: Ուշ աշնանը էտեք տարեց ճյուղերը և ծածկեք բույսը, այլ կերպ այն կցրտահարվի: Կիրառվում է չոր, քարքարոտ վայրերի կանաչապատման համար, կանխում է հողի էրոզիան:

Բուժիչ նպատակներով օգտագործում են ծաղիկը, տերևը, ցողունը: Հումքը մթերում են ծաղկման շրջանում, հյուսում ցողունները և չորացնում: Ծաղիկներն ավելի մեծ քանակությամբ եթերային յուղ են պարունակում, դրանք կարելի է օգտագործել ծաղկելուց 7-10 օր անց: Թարմ ծաղիկը պարունակում է՝ մինչև 1, իսկ



չորը՝ 3 տոկոս եթերային յուղեր, նաև՝ դաբաղանյութ, ֆլավոններ, ֆիտոստերոլներ, խեժեր, դառնանյութ, ուրսոլաթթու: Բացի եթերային յուղից՝ բույսից ստանում են նաև կումարին և գերնիարին: Նարդոսի յուղը կիրառվում է թարախային վերքերի, մաշկային հիվանդությունների, նևրալգիայի բուժման համար:

Արոմաթերապիայում օգտագործվում է որպես աշխատունակությունը բարձրացնող, հոգնածությունը նվազեցնող, նյարդային և սիրտ-անոթային համակարգերի աշխատանքը կարգավորող միջոց: Բույսի պատրաստուկները լավացնում են ախորժակը, հանգստացնում որովայնի ցավերը, նյարդային լարվածությունը, որոշ դեպքերում՝ բուժում անքնությունից:

Ունի միզամուղ և մաղձը հեղուկացնող հատկություն: Ծաղիկի թուրմը լավացնում է գլխուղեղի արյան շրջանառությունը: Բուլղարները նարդոսի յուղով բուժում են պնևմոնիան, ռինիտը, լարինգիտը, կիրառում են ստոմատոլոգիայում: Լայն կիրառություն ունի նաև նարդոսի մեղրը՝ նվազեցնում է գլխացավը, կիրառում են միգրենի, տախիկարդիայի, ականջի բորբոքման և աղմուկի բուժման ընթացքում, նվազեցնում է ոսկորների ցավը:

Ա. Ամասիացին նարդոսի բուժիչ հատկությունների մասին գրել է. «Եզնախոտ, աստուխոտոս, հուսամ, փաղանգամուշկ, լվացուկ, խուզամի: Օժտված է փափկեցնող ու բացող հատկությամբ, ամրացնում է նյարդերն ու մաքրում է ուղեղը: Օշարակը կօգնի ընկնավորության ու մելանխոլիայի դեպքում, կամրացնի զգայության օրգանները, կկանխի ծերացումը, կսրի բանականությունը: Կօգնի նաև որովայնի խոռոչում գտնվող օրգանների հիվանդությունների, ինչպես նաև՝ զանազան ոսկրացավերի դեպքում: Դրա ընդունման չափաբաժինը 6 գրամ է»:

Նարդոսի եթերային յուղն ազդեցիկ հակաալերգիկ միջոցներից մեկն է: Այն ուժեղացնում է այլ դեղամիջոցների (բուրումնավետ յուղերի) բուժիչ ազդեցությունը: Կարելի է առանց բուսայուղի հետ խառնելու, քսել մաշկին: Բարելավվում է մարսողությունը, օգտակար է բրոնխների ասթմայի դեպքում: Կախված ալերգիկ ռեակցիայի բնույթից՝ օգտագործվում է լոգանքի, թրջոցի, ինհալացիայի կամ լոսյոնի մեջ: Անփոխարինելի միջոց է սթրեսի պատճառով առաջացած ալերգիկ ռեակցիայի դեպքում:

***Աղմուկ ականջներում.*** 10 գ նարդոսի խոտին (ծաղիկը, տերևը) ավելացրեք 200 մլ եռջուր, 10 րոպե եփեք ջրային բաղնիքի վրա: Թրմեք մինչև հովանալը և քամեք: 2 ճ/գ թուրմը լուծեք 100 մլ գոլ ջրի մեջ, ավելացրեք 1-ական թ/գ խնձորի քացախ և մեղր (լավ է նարդոսի), խմեք այս չափաբաժնով օրը 3 անգամ՝ սնվելու ընթացքում: Հանգստացնում է նյարդերը, գլխացավը, կանխում գլխապտույտը: Ոսկրացավ. Նարդոսի ծաղիկները լցրեք ապակե տարայի մեջ (ընտրեք կարմրավուն երանգի), ավելացրեք մեղր. այնքան, որ ծածկի հումքը: Ցանկալի է, որ բույսը թարմ լինի: Վեց ամիս թրմեք մութ, հով տեղում: Օգտագործել 1-ական ճ/գ, օրը 3 անգամ՝ սնվելուց 10 րոպե առաջ: Այս խառնուրդն ավելացրեք ոչ տաք թեյի մեջ: Հանգստացնում է նյարդերը, բարձրացնում է տրամադրությունը, պարգևում հանգիստ քուն:

***Գլխապտույտ.*** Շաքարի խորանարդիկի վրա կաթեցրեք 5 կաթիլ նարդոսի յուղ: Օգտագործեք ըստ անհրաժեշտության, նաև գլխացավի, ախորժակի լավացման դեպքերում:

***Լիլիթ Գասպարյան***

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

### ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է 2017 թ. ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

**«ԱԳՐՈԼՐԱՏՈՒ» թերթ**
1 համարի գինը՝ 120 դրամ
6 ամսվանը՝ 1980 դրամ
1 տարվանը՝ 3960 դրամ

**«ԱԳՐՈԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ամսագիր**
1 համարի գինը՝ 1350 դրամ
6 ամսվանը՝ 4050 դրամ
1 տարվանը՝ 8100 դրամ



Բաժանորդագրությունը իրականացնում են՝

- Գյուղատնտեսության աջակցության հանրապետական և մարզային կենտրոնները
- «Հայփոստ»,
- «Հայմամուլ»,
- «Պրես-Առաքիչ»

կազմակերպությունները



***Հարգելի քաղաքացիներ,***

Տեղեկացնում ենք, որ Գյուղատնտեսական հանրագիտարան ձեռք բերելու համար կարող եք զանգահարել 011 52 48 34 հեռախոսահամարով:

Հանրագիտարաններն առկա են նաև Գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոններում, ինչպես նաև՝ «Նոյան Տապան» և «Բուկինիստ» գրատներում:




ԱԳՐՈ Լրատու
AGRONEWS
Հասցեն՝ Երևան, Սամիկոնյանց 39ա, հեռ.՝ 23-21-02, ֆաքս՝ 23-03-80
E-mail: asrc@cln.am կայք http://www.asrc.am

ՀԻՄՆԱԴԻՐ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ
ՀՀ Գյուղատնտեսության նախարարություն
«Գյուղատնտեսության աջակցության հանրապետական կենտրոն» ՓԲԸ
Տնօրեն Ա. ՎԱՀԱՆՅԱՆ
Գլխավոր խմբագիր և համարի պատասխանատու՝ Լ. ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ

Տպաքանակ՝ 1100
2 տպագրական մամուլ
գրանցման թիվ՝ 01 Մ 000226
դասիչ՝ 69105
պատվեր թիվ՝ 8
ստորագրված է տպագրության 06.03.2017 թ.
տպագրվում է ԳԱՀԿ տպարանում,
Երևան, Սամիկոնյանց 39ա